**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՓՆՄԱՇՁԲ-10/12-2**

ք. Երևան 25 հուլիսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Հակոբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 350 000 (չորս միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. Շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. Կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչությունը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Հազարաշեն» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան Կոմիտասի փ. 54Վ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | <Արդշինբանկ> ՓԲԸ |
| Հ/հ 900011170?4 | Հ/Հ 2470103171510000 |
| ՀՎՀՀ 02?2157 | ՀՎՀՀ 01816381 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ |

Հավելված N 1
«25» հուլիսի 2018թ. կնքված
ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի առանձին տեսակների անվանումները | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | կատարման | |
| | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71241200/3 | Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ 1 318 182 ՀՀ դրամ<br>Փորձաքննություն 131 818 ՀՀ դրամ | 1 450 000 | Մարտունու զինկոմիսարիատ | Մինչև 10.12.2018թ. |
| 2 | 71241200/3 | Աբովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ. | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ 1 318 168 ՀՀ դրամ<br>Փորձաքննություն 131 832 ՀՀ դրամ | 1 450 000 | Աբովյանի զինկոմիսարիատ | Մինչև 10.12.2018թ. |
| 3 | 71241200/3 | Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ 1 318 147 ՀՀ դրամ<br>Փորձաքննություն 131 853 ՀՀ դրամ | 1 450 000 | Շենգավիթի զինկոմիսարիատ | Մինչև 10.12.2018թ. |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Հազարաշեն» ՍՊԸ
տնօրեն

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

**Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվայինփաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական առաջադրանք**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծային աշխատանքներ |
| 2 | Ֆինանսավորման աղբյուրը | ՀՀ 2018թ. Պետական բյուջե |
| 3 | Պատվիրատու | ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 4 | Աշխատանքի անվանումը | Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում |
| 5 | Աշխատանքի տեսակը | Վերակառուցում |
| 6 | Նախագծման փուլը | Աշխատանքային նախագիծ |
| 7 | Նախագծման հիմնական պահանջներ | Նախագծով իրականացնել Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (Երկու հարկանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցում-2000մ2: Տարածքի բարեկարգում:) |
| 8 | Ընդհանուր դրույթներ | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորսական թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը |
| | | *- ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումների գծագրեր* |
| | | *- նախահաշիվ* |
| | | *- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ* |
| 9 | Համաձայնեցումներ | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ |
| 10 | Փորձաքննություն | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

**Արովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական առաջադրանք**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծային աշխատանքներ |
| 2 | Ֆինանսավորման աղբյուրը | ՀՀ 2018թ. Պետական բյուջե |
| 3 | Պատվիրատու | ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 4 | Աշխատանքի անվանումը | Աբովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում |
| 5 | Աշխատանքի տեսակը | Վերակառուցում |
| 6 | Նախագծման փուլը | Աշխատանքային նախագիծ |
| 7 | Նախագծման հիմնական պահանջներ | Նախագծով իրականացնել Աբովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (Երեք հարկանի զիկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցում-1080մ2: Տարածքի բարեկարգում:) |
| 8 | Ընդհանուր դրույթներ | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորսական թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը |
| | | *- ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումների գծագրեր* |
| | | *- նախահաշիվ* |
| | | *- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ* |
| 9 | Համաձայնեցումներ | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ |
| 10 | Փորձաքննություն | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

**Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների տեխնիկական առաջադրանք**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծային աշխատանքներ |
| 2 | Ֆինանսավորման աղբյուրը | ՀՀ 2018թ. Պետական բյուջե |
| 3 | Պատվիրատու | ՀՀ պաշտպանության նախարարություն |
| 4 | Աշխատանքի անվանումը | Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում |
| 5 | Աշխատանքի տեսակը | Վերակառուցում |
| 6 | Նախագծման փուլը | Աշխատանքային նախագիծ |
| 7 | Նախագծման հիմնական պահանջներ | Նախագծով իրականացնել Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (Երկու հարկանի զիկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցում-995մ2: Նախատեսել մասնաշենքի ուժեղացման աշխատանքներ: Տարածքի բարեկարգում:) |
| 8 | Ընդհանուր դրույթներ | Կազմել և պատվիրատուի հաստատմանը ներկայացնել նախագծային առաջադրանքը |
| | | Նախագծային փաստաթղթերը կազմել ՀՀ-ում գործող շինարարական նորմերին և կանոններին համաձայն |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն չորսական թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային կրիչով |
| | | Նախագծային փաստաթղթերը պետք է մշակված լինեն համակարգչային հատուկ ծրագրերի կիրառման միջոցով, կազմված լինեն գունավոր և ընթեռնելի |
| | | Նախագծային փաստաթղթերի կազմը պետք է ներառի ոչ պակաս քան ստորև նշված մասերը |
| | | *- ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումների գծագրեր* |
| | | *- նախահաշիվ* |
| | | *- նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ* |
| 9 | Համաձայնեցումներ | Նախագիծը համաձայնեցնել պատվիրատուի համապատասխան շահագրգիռ ստորաբաժանումների հետ |
| 10 | Փորձաքննություն | Նախագիծը պատվիրատուի կողմից կընդունվի միայն փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Հազարաշեն» ՍՊԸ
տնօրեն

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Հավելված N 2*
*«25» հուլիսի 2018թ. կնքված*
*ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր Բայց ոչ ուշ քան 25.12.2018թ. | Ընդամենը |
| 1 | 71241200/3 | Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 |
| 2 | 71241200/3 | Արովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 |
| 3 | 71241200/3 | Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 | 1 450 000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
Պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Հազարաշեն» ՍՊԸ
Տնօրեն

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Հավելված N 3*
*«25» հուլիսի 2018թ. կնքված*
*ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «   » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված N 3.1*
*«25» հուլիսի 2018թ. կնքված*
*ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ___________________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |

Հավելված 3
<<25>> հուլիսի 2018թ.կնքված
<<ՓՆՄԱՇՁԲ-10/12-2>> ծածկագրով պայմանագրի

**Պայմանագրի կողմ**
<<Հազարաշեն>> ՍՊԸ
ք. Երևանի, Կոմիտասի 54Վ,
Հ/h 2470103171510000
<<Արդշինբանկ>> ԲԲԸ
ՀՎՀՀ 01816381

**Պատվիրատու**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք.Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011117034
ՀՎՀՀ 02522157

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

5 դեկտեմբերի 2018թ.

Պայմանագրի/այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար աշխատանքների կատարման գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 25.07.2018թ.

Պայմանագրի համարը՝ ՓՄՄԱՇՁԲ-10/12-2

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության պետ Ա.Ավետիսյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս **<<Հազարաշեն>> ՍՊԸ** տնօրեն **Գ.Հակոբյանի**, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ **<<25>> դեկտեմբերի 2018թ**. դուրս գրված N Բ 9305321871 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| Հ/հ | Մատակարարված ապրանքների,կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը՝ ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | քանակական ցուցանիշը՝ փաստացի | կատարման ժամկետը՝ ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | կատարման ժամկետը՝ փաստացի | Վճարման ենթակա գումարը / հազ. դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| 1 | Արովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018-10.12.2018 | 25.07.2018-10.12.2018 | 1450.0 | դեկտեմբեր 2018թ. |
| 2 | Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018-10.12.2018 | 25.07.2018-10.12.2018 | 1450.0 | դեկտեմբեր 2018թ. |
| 3 | Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018-10.12.2018 | 25.07.2018-10.12.2018 | 1450.0 | դեկտեմբեր 2018թ. |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | 4350.0 | 4350.0 | | | 4350.0 | |

Սույն արձանագրությունը կազմելու, հանձնման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ՀԱՆՁՆԵՑ՝
<<Հազարաշեն>> ՍՊԸ տնօրեն՝
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության պետ՝
Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 3.1
<< 25>>հուլիսի 2018թ.կնքված
<<ՓՆՄԱՇՁԲ-10/12-2>> ծածկագրով պայմանագրի

## ԱԿՏ N 1
## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ՊՆ ԿՇ և ՁԲ վարչության (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Հազարաշեն>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 25.07.2018թ. կնքված ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 25 դեկտեմբերի 2018թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Չափի միավորը** | **քանակը (փաստացի)** |
| Արովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | ՀՀ ԴՐԱՄ | 1 450 000 |
| Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | ՀՀ ԴՐԱՄ | 1 450 000 |
| Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | ՀՀ ԴՐԱՄ | 1 450 000 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

_______________ [illegible]ակոբյան

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________ Մ.Սավթայյան

_______________ Ա.Հովհաննիսյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2015թվականի ապրիլի 1-ի 108 Ն հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**25 դեկտեմբերի 2018թ.**

Պայմանագրի անվանումը՝ ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծային աշխատանքներ

Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 25.07.2018թ.

Պայմանագրի համարը՝ ՆՓՆՄԱԾՁԲ-10/12-2

Պատվիրատուի անվանումը ՀՀ պաշտպանության նախարարություն

Պայմանագրի կողմի անվանումը <<Հազարաշեն>> ՍՊԸ

Վերոհիշյալ պայմանագրերի շրջանակներում կատարողը իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

| Հ/հ | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը | | Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի |
| | | | Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Աբովյանի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018 10.12.2018 | 25.07.2018 10.12.2018 |
| 2 | Շենգավիթի զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018 10.12.2018 | 25.07.2018 10.12.2018 |
| 3 | Մարտունու զինկոմիսարիատի մասնաշենքի վերակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | Կատարողական ակտ N 1 | 1450.0 | 1450.0 | 25.07.2018 10.12.2018 | 25.07.2018 10.12.2018 |

Նշումների անհամապատասխանության մասին՝ անհամապատասխանություններ չկան:

Հիմք ընդունելով վերոգրյալը տալիս եմ **դրական** եզրակացություն:

24.12.2018թ.

Գնման հայտը նախագծման ներկայացուցիչները՝

ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ՁԲՎ ԿՇՎԾ ԱՏ ԲԱԺՆԻ ՊԵՏ　　Մ.ՍԱՎԹԱԼՅԱՆ

ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ՁԲՎ ԿՇՎԾ ԱՏԲ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ　　Ա.ՀՈՎՀՈՆՆԻՍՅԱՆ

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 25 | Դեկտեմբեր | 2018 թ. | Բ | 9305321871 |

| [4] Մատուցման ամսաթիվը | | |
|---|---|---|
| 10 | Դեկտեմբեր | 2018 թ. |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 25 Հուլիս, 2018 թ. | ՓՆՄԱՇՁԲ-10/12-2 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 8 1 6 3 8 1 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՀԱՅԱՐԱՇԵՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | <<Արդշինբանկ>> ՓԲԸ — N 2470103171510000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿՈՄԻՏԱՍ ՊՈՂ 54Վ -- |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 5 2 2 1 5 7 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011117034 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ Բագրևանդի 5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ծավալային քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | հատ | 1 | 1450000 | | 1450000 |
| 2 | ՀՀ ՊՆ կարիքներ համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | հատ | 1 | 1450000 | | 1450000 |
| 3 | ՀՀ ՊՆ կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | հատ | 1 | 1450000 | | 1450000 |
| Ընդամենը | | | | | | 4350000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HAKOBYAN GURGEN 3402480042

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

25/12/2018 13:55:06